

ՍՄԱՅԼՍ, Սամուէլ. — «Ինքնօգնութիւն», Գերմաներէնից թարգմանեց Փիլիպոս Վարդանան: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1890 թ. փոքր քառածալ, 592+XII երես, տառ № 12, գինն է 1 ր. 50 կ.:

Այս երկրորդ անգամն է որ պր. ֆ. Վարդանեանը մեզ առիթ է տալիս զբաղելու Սմալլսի աշխատութիւններով: Այդ հռչակած անգլիացի հեղինակի «Բնաւորութիւնը» գրախօսեց այստեղ 1889 թ. № 6: Նորա «Ինքնօգնութիւնը» մի տեսակ շարունակութիւն է «Բնաւորութեան» գրքի, և նախ քան անցնենք առաջինին, թերևս անօգուտ չը լինի երկու տարի առաջ կաատարած մեր գրախօսութիւնից մի քանի քաղածքներ այստեղ առաջ բերել: «Նորա («Բնաւորութեան») մէջ չը կալ ոչ անալիզ և ոչ սինտեզ, այլ կալ միայն իրատ, պնդումն, հաստատումն հեղինակաւոր մարդկոտնց վկայութիւններով վաւերացրած: Այդ պատճառով ազդեցութիւնը Սմալլսի ընթերցումից այնքան մնալուն չէ, որչափ փիլիսոփայօրէն գրւած դաստիարակութեան զրքերի ազդեցութիւնը: Հեղինակի զլիաւոր ցանկութիւնը սա է, որ մաքդիկ, ինչ գործի և կոչումի տէր և լինին, ամենից առաջ պէտք է կրթեն իրանց բնաւորութիւնը համեմատ այն պահանջներին, որ անհրաժեշտ են դարձնում ընտանիքի սրբութիւնը, հասարակութեան անդամների համերաշխութիւնը, քաղաքացիութիւնը: Պարտաճանաչութիւն — սնա այն զլիաւոր բանը, որի շուրջը պէտք է պտտէ կեանքը, մանաւանդ որ այդ լատկութիւնով կարող է փալ-

լել թէ մեծը և թէ հասարակ մարդը»: «Ինքնօգնութեան» մէջ Սմալլսը անցէկացնում մի ուրիշ միտք, այն է թէ՛ մարդս ամեն բանում պէտք է իւր սեպհական աշխատութեան, իւր ջանքերի վերայ լուս զնէ և որ միայն ինքնօգնութիւնով կտրելի է նպատակին հասնել:

Սմալլսի գրքի այս հիմնական գաղափարը սակալն մասամբ միայն ճիշդ է: Մենք գիտենք, որ Սմալլսի այդ գաղափարը շատերին ինքն ըստ ինքեան հասկանալի կը թւալ և որ զարմանալի կը թւալ շատերին որ այդ մտքի դէմ խօսելու փորձն անգամ կարելի է անել: Ճիշդը այս է որ Սմալլսը, որպէս երևում է, պատկանում է սոցիալական և քաղաքական գիտութիւնների այն շկոյակին, որը հասարակութեան մէջ միայն տնհատներ է տեսնում, փոխանակ անհատների մէջ հասարակութիւն որոնելու: Այդ դպրոցի հեղինակները և հետեւողները ամեն բան սպասում են լոկ անհասական աշխատութիւնից և կարծում են, որ միայն եթէ մարդս ջանասէր և նպատակին հասնելու համար աշխատասիրութիւնը ունենալ՝ նորա համար միևնոյնն են արտաքին հանգամանքները, հասարակական և քաղաքական կարգ ու կանոնները, պետական օրէնքները և այլն: «Ինքն իրան օգնողին Աստուած էլ կ'օգնէ» ալ՝ առածով է սկսւում գիրքը. և

Սմալլսը այս աւանդական առածը այնպէս է հասկանում, որ իբր թէ մինչև անգամ «ինչ որ անում են անհատներին ու դասակարգերին օգնելու համար՝ մի որոշ չափով Բուշօնում է նրանց մէջ անձամբ իրանց ձեռքով իրանց համար բան անելու անհրաժեշտ ձգտումը»: Պէտք է սասած որ այս վարդապետութիւնը, որ իշխող էր Սերոպալում այս գարուս մինչ վերջին ժամանակները, այժմ արդէն հնացած վարդապետութիւն է և հակառակ այն ոգուն, որը թելադրել է լուսաւորած ազգերին բեֆորմներ մտցնելու՝ ժամանակի պահանջներին անհամապատասխան դարձած օրէնսդրութիւնների մէջ: Գոքա մերժում են ամեն մի միջամտութիւն տէրութեան կողմից՝ օրէնսդրական միջոցով օգնութեան հասնել թէ արդիւնարեութեան, թէ հաստատութիւններին և թէ որ և է դասակարգին: Այդ դպրոցը ճանաչում է միայն լիակատար ազատութիւնը՝ որ ամեն մի անհատ գործէ այնպէս ինչպէս ինքը կը կամենայ: «Ամենալաւը, ինչ նրանք (օրէնքները) ձեռնհաս են անել, այդ՝ անհատին ազատութիւն տալն է, որ նա ինքն իրան զարգանալ և ինքը բարոյք է իւր վիկակը» ասում է Սմալլսը (երես 6). կրկնելով Արևմտեան Սերոպալի հին լիբերալների քաղաքական, տնտեսական և սոցիալական դոգման, մի դոգմա, որի անկատարութեան և վնասակարութեան դէմ բողոքել են դարուս ամենահամակրելի քաղաքագէտները, տնտեսագէտները և սոցիոլոգները: Բարբազդաբար այդ վարդապետութեան դարը արդէն անցել է Սերո-

պալի համար և այժմ իշխող վարդապետութիւնը այն դոգմալի բոլորովին հակառակն է: Նոր վարդապետութիւնը ճանաչում է որպէս գործող ֆակտորներ թէ անհատին, թէ դասակարգերին և թէ տէրութիւնը: Հին գպրոցը, որին պատկանում է և Սմալլսը, գործող ֆակտոր ճանաչում էր միմիայն անհատին. դասակարգեր ուրեմն և դասակարգացին չահեր նա չէր ճանաչում: Իսկ ինչ վերաբերում է տէրութեանը՝ այդ հին դպրոցը չտակացնում էր սրան միմիայն չև ոք զեր. նա պէտք է միայն կարգը պահպանէ՝ ուրիշ ոչինչ. նա պէտք է միայն անզգաց կերպով նալ է թէ ինչ են անում անհատները, քաղաքացիները՝ ուրիշ ոչինչ. նա իրաւունք չը պիտի ունենալ միջամտելու օրէնքներով լոգուտ որ և է դասակարգի: Մի խօսքով, հին լիբերալների ասելով, «կառավարութեան պաշտօնը աւելի ժխտական ու զսպիչ է, քան թէ դրական ու գործագրիչ», կամ աւելի պարզն ասած՝ տէրութեան պաշտօնը աւելի ոստիկանական, պոլիցիական պէտք է լինի քան թէ ստեղծագործական:

Ահա այդ հնացած վարդապետութեան աչակերտ է «ինքնօգնութեան» հեղինակ Սամուէլ Սմալլսը: Մեր հալոց գրականութեանը չափնի հեղինակներից նոյն դպրոցին պատկանող կարող է համարել Մորիս Բլոկ երրորդական գիտնականը, որի մի ինչ որ աննշան քաղաքատնտեսական աշխատութիւնը՝ «Փոքրիկ Ձեռնարկ Գործնական Տնտեսութեան» խորագրով հանդուցեալ II. Պալասանեանի

փոխագրութեամբ բոլորովին զուր տեղը հրատարակել է «Թիֆլիսի հրատարակչական ընկերութիւնը» 8—9 տարի առաջ և որի տեղեկանքիւնները բոլորովին արդարացի կերպով պախարակուել էին կարծատե «Գործ» ամսագրում:

Մենք այս գրախօսական չօգուածի մէջ չենք կարող աւելի ընդարձակել գրքի թէօրիական կողմի վերալ. այդքանն էլ բաւական ենք համարում մեր ընթերցողներին հասկացնելու համար, որ մեր առաջադրած գրքի թէօրիական մասը մենք բոլորովին չենք հաւանում և որ տարաժամ է մեր դրականութեան մէջ ջանալ գաղափարներ պատաստելու, որոնք արդէն ճանաչած են որպէս հնացած, իրանց գարը անցած:

Բոլորովին ջոկ բան է, եթէ Սմալսը ասէր՝ ամեն մարդ ջանադիրութիւնով, սեպհական տոկուն և նպատակին զիտակ աշխատանքով կարող է հասնել այնպիսի կատարելագործութեան և այնպիսի արդիւնքների, նոյն իսկ վատ չանգամանքներում, որոնց չի կարող հասնել մի մարդ, ամեն ալաւ հանգամանքներում, եթէ միայն նա ոչ մի ջանք, ոչ մի աշխատութիւն չի գործ դնում իւր ուժերը զարգացնելու կամ նպատակին հասնելու: Այդ երկու պարբերութիւնների մէջ անաղանդութիւնը ահագին է. իմ ասածով՝ ինքնօգնութիւնը մնում է ստեղծագործող ֆակտոր առանց հերքելու հասարակական և պետական գործունէութեան անհրաժեշտութիւնը, մինչդեռ Սմալսը կարծում է թէ ինքնօգնութիւնը մի այնպիսի գործող գոր-

ծիչ է, որով իւր թէ աւելորդ են հասարակական և պետական գործունէութիւնները լառաջլիմութեան գործի նկատմամբ:

Եւ իսկապէս «Ինքնօգնութեան» մէջ բերած փառաւոր օրինակները միմիայն հաստատում են մեր ասածը և ոչ Սմալսի ասածը: Այն հարկւրաւոր անձերի կենսագրական տեղեկութիւնները, որ ամփոփւած են այս գրքի մէջ, ցոյց են տալիս միայն ինքնօգնութեան ուժը, բայց նոքա չեն ապացուցանում լառաջլիմութեան միւս ֆակտորների անկարեորութիւնը:

Եւ հետաքրքրական են այն բաղմաթիւ օրինակները, որ բերած են ներկազ գրքի մէջ: Ահա ինչու Սմալսի գիրքը, չը նալած նորա թէօրիական դատողութիւնների թուլութեանը՝ այնուամենայնիւ մնում է մի ընթերցանելի գիրք: Վերջինս ներկալացնում է մի շարք ամեն տեսակ նշանաւոր անձերի կենսագրութիւններ, նպատակաւարմար կերպով տասն և չորս գլուխների մէջ դասաւորած: Կանգ առնելը նոցա վերալմեղ շատ հետուն կը տանէր: Մենք կը բաւականանանք միայն վշտապակելով այն անձերին, որոնք ամենից շատ տեղն են բռնում այս գրքի մէջ: Գուք ան՝ Ուաս, որ գտաւ շոգու ուժը: Արկրատ, որ հնարեց բամբակից ապրանք շինելու արհեստը. գորանից լետոյ Ուիլիամ Լի, որ հնարեց գուլպա գործելու մեքենան, Ջոն Հիթկոտ՝ ժանկագործ մեքենայի հնարողը, Վաքաու՝ իւր անոռնով լալանի ոստայնանկ մեքենայի հնարողը, Հէլլման՝ բամբակ սանտ-

րելու մեքենայի հնարողը, Ֆուլտոն՝ չոգենաւի հնարողը, Ստեֆենսոն՝ երկաթուղու և չոգեկառքի հնարողը, ապա չորս երեւիլի բրուտներ՝ Պալիսի, Բեօտգեր, Ուէջվուզ և Մինտոն:

Որպէս ջանքի և տոկոսնութեան նշանաւոր օրինակներ բերած են ի միջի ալոց Նինուէի աւերակների բրողներ և սեպագիր արձանագրութիւնների կարդալու եղանակը գտնող գիտնականները, որպէս Ռաուլինսոն, Լէյարդ: Ապա Բիւֆոն՝ «Բնական պատմութեան» երեւիլի հեղինակը, Վալտեր Սկոտ՝ երեւիլի վիպասանը, Յովսէփ Իււ՛ պերճախօսը և այլն:

Մենք աչտոնդ կանդ ենք առնում, որովհետև երկար է շարքը այն աւոճենների, որոնք՝ լիշատակած են

ամբողջ գրքում: Իւր սեփական իբր կենսագրական հարուստ նիւթ պարունակող, Սմալլսի այս գիրքը թերևս գերազանցւած չէ ոչ մի ուրիշից և ալդ պատճառով նա շատ կարևոր նպաստ է հալոց ժողովրդական գրադարանին: Հեղինակի թէօրիական թույլ դատողութիւնները սովորական ընթերցողների համար աննկատ կ'անցնեն կենսագրական տեղեկութիւնների այն լիութեան առջև, որ ներկայացնում է այս գիրքը, որը միևնոյն ժամանակ և մի տեսակ ձեռնարկ է հալ ընթերցողի համար՝ լուսաւորւած ազգերի գործիչների հետ ծանօթանալու:

Ա. Ա.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ԼԵՀԱՀԱՅՈՑ ԴԱՏԱՍԱԼԱԳՐՈՑԸ

1) ԲԻՇՈՅ, «Լեհահայոց հին իրաւունքը» և 2) ԿՈԼԷՐ, «Իրաւունք Հայոց»: Թարգմանեց Հ. Գրիգորիս Վ. Գալէմբարեան Մխիթ. Ուխտէն: 1890 թ. Վիննա, Մխիթ. տպար. փոքր քառածալ, 84+58 էրես, տաւ. № 10 գինն է 1 Ֆրանկ 25 սանտ.

Հայերը, գաղթելով Լեհաստան, երկար ժամանակ շարունակում էին կառավարել իրանց սեպական օրէնքներով և աւանդութիւններով: Սիգիզմունդ Ա. թագաւորը, աւելի պարզ որոշելու համար Լեհահայոց իրաւունքը, պահանջեց, որ հայերը իրան ներկայացնեն իրանց օրէնքները լատին թարգմանութեամբ:

Ներկայացւած իրաւունքը 1519 թւին թաղաւորը իւր խորհրդական-

ների հետ քննելուց լետու, հաստատեց, չնչին փոփոխութիւններ մտցնելով: Ահա այս դատաստանագիրքն է վերնագրում լիշած հեղինակների ստուճնասիրութեան առարկան:

Ինչ է ներկայացնում այս դատաստանագիրքը, կազմւած է դա Լեհաստանի հալերթի ձեռքով, թէ այս վերջինները օգուտ քաղեցին մի արդէն գոլութիւն ունեցող իրաւաբանական լիշատակարանից: Ինչպէս հաստա-